«Կոռնիձորը» Կոռնիձորից

«Կոռնիձոր» ջոկատի գրոհային խումբը Շահումյանում (1991 թ.)

– Ե՞րբ է ստեղծվել Ձեր ջոկատը:

– Մեր ջոկատը առաջիններից մեկն էր: Ստեղծվել է 1988 թ. գաղտնի գործողությունների ժամանակ: Երբ սկսվեց Երասխավանի տագնապը, այն ժամանակ շտաբի պետը Վազգեն Սարգսյանն էր, որոշվեց, որ ջոկատները պետք է տարբերակվեն, և քանի որ մենք Կոռնիձորից էինք եկել, ջոկատը այդպես էլ կոչվեց: Մինչ այսօր գործում ենք այդ անունով, որովհետև այն մենք չենք դրել, այլ ստացել ենք մարտական մկրտության հետ մեկտեղ:

– Մինչ այժմ զոհեր ունեցե՞լ եք:

– Մեր տղաներից զոհվել են ջոկատների կազմում: Բայց կռիվներ իմ ղեկավարությամբ ամենածանր հարվածը եղել է յոթ վիրավոր: Բժշկական օգնություն ստանալուց հետո նրանք վերադարձել են մարտական դիրքեր:

– Ո՞ր վայրերում եք կռվել:

– Ջոկատը սկսել է իր գործողությունները Գորիսից: Այն ժամանակ դեռ գաղտնի կերպով կատարում էինք Վազգեն Մանուկյանի հանձնարարությունները: Դեռ ջոկատ հասկացություն չկար՝ տղաներ կային, որ պատրաստ էին զինված առաջադրանք կատարել: Ջոկատը եղել է նաև Երասխավանում, Տաուշում, Իջևանում, Նոյեմբերյանում և այլուր: Վերջին մեր առաջադրանքը կատարելիս, բախվում էինք «գորշ գայլերի» հետ:

– Դուք հինգ տարի է մասնակցում եք հայրենիքի պաշտպանության գործին: Ձեր կարծիքով, ո՞րն է երկրապահի շարժման ներքին տրամաբանությունը և նպատակը:

– Շարժումը սկսվեց ազգի սերուցքի կողմից, անցնելով տարբեր փուլեր, ընդլայնվելով, այն, բնականաբար, ներառեց նաև պատահական մարդկանց: Մենք հանձնաժողով կազմեցինք, որն սկսեց մաքրել ջոկատները, թողնելով ընտրովի երկրապահներ: Փորձը ցույց տվեց, որ մաքրման ենթարկված ջոկատները մինչև վերջ կանգուն եղան, իսկ պահի ազդեցության տակ ստեղծված, կամ այլ մկրտումներով առաջացած խմբերը չդիմացան ժամանակի քննությանը: Երկրապահներում վստահության չափանիշը շատ բարձր է գնահատվում. մարտի ժամանակ ամենակարևորն է մեջքդ վստահել ընկերոջը: Բարձր է նվիրվածությունը: «Բարով արժանանամ հրեղեն գնդակի համբույրին», – այդ հին ֆիդայական երդումը այսօր մենք էլ ենք տալիս:

– Շատ մարդկանց մեջ բացասական վերաբերմունք է առաջանում քաղաքում պտտվող մորուքով համազգեստավորների նկատմամբ:

– Համաձայն եմ Ձեզ հետ, որ մեզ վարկաբեկում են... Երևի դա արվում է նպատակային: Կարող եմ, սակայն, նշել, որ ցանկացած մեզ հետ շփում ունեցած հայ ճիշտ պատկերացում է ունենում երկրապահների մասին: Մենք միշտ պայքարել ենք, այսպես կոչված, «ֆիդայիստներ»–ի դեմ, որոնք չեն ապրել մեր կյանքով: Մենք թերթերում և հեռուստատեսությամբ չենք երևացել, առաջադրանքը կատարելուց հետո քաղաքում, զենք և համազգեստ չենք կրում: Գիտեք, պատահում է, որ ինչ–որ մեկը պատմում է իր «հերոսությունների» մասին, սակայն պարզվում է, որ նա այնտեղ բնավ չի երևացել: Լինում են դեպքեր, որ համազգեստ հագած մարդիկ շուկայում «գին են գցում» և այլն... Ամեն մի համազգեստավոր երկրապահ չէ:

– Երկրապահի ջոկատները կոչված էին փոխարինել բացակայող ազգային բանակը: Այսօր բանակ կա...

– Ջոկատները փառքով կատարեցին իրենց պարտքը: Այժմ բանակ կա, և մեր տղաների առջև բանակ մտնելու ոչ մի արգելք չկա: Ով մարտական փորձ և բանակում ծառայելու ցանկություն ունի, անցնում է ծառայության: Նրանք պետք է իրենց գաղափարները փոխանցեն հայկական բանակ: Մեր բանակը սկզբնական փուլում նոր էր, բայց հիմա արդեն հունի մեջ է ընկել և հաջողությունների է հասնում:

– Հարիր է արդյո՞ք հայրենիքի պաշտպանությունը կուսակցականության հետ:

– Ոչ, անհարիր է: Քաղաքականությունը ազդում է կռվողի հոգեբանության վրա. եթե ընկերդ հակառակորդ կուսակցությունից է, արդեն փոխադարձ ինքնազոհաբերում չի կարող լինել: Ամեն մի կուսակցություն սկսում է զոհվածներին իրեն վերագրել: Ես միշտ ասել եմ, որ չարժե մեզ երմահու «կուսակցականացնել», մեզնից ոչ ոք մահից մի քանի օր առաջ կուսակցություն ընդունվելու դիմում չի տվել: Դա ես դիավաճառություն եմ համարում: Ունենք պետություն, ժողովուրդ, հայրենիք և կողք–կողքի ծառայում ենք մի նպատակի: Եթե ուզում ես կուսակցական խաղերով զբաղվել, վայր դիր զենքդ, անցիր կուսակցական աշխատանքի: Հետո, Աստված մի արասցե, կուսակցականությունը ջոկատներում կարող է մեզ դաժան վախճանի հասցնել (Վրաստանի և Ադրբեջանի օրինակով): Մինչ այսօր եղած քաղաքական բախումները ապացուցեցին, որ մենք միատարր ազգ ենք և չենք ցանկանում ինքներս մեր ձեռքով մեզ դատել, այլ ընդհակառակը, ուզում ենք մեր ապագան կերտել մեր ձեռքով...

– Ի՞նչ նպատակներ ունի երկրապահների կայանալիք հանրագումարը:

– Հանրագումարի կազմկոմիտեի նախագահը Վազգեն Սարգսյանն է, տեղակալը Ալիկ Պետրոսյանը: Կազմկոմիտեի 13 անդամներից մեկն էլ ես եմ: Մենք ցանկանում ենք օգնել իշխանությանը, պետությանը, որպեսզի մեր երկրապահի ջոկատների ներքին խոհանոցի հարցերը լուծենք ինքներս: Մենք պատրաստ ենք համագործակցել բոլոր ծառայությունների հետ, մեր վիրավոր ընկերների, վատ ապրող տղաների հարցերը լուծելու համար: